ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
հրավերի պարզաբանման մասին

Հայտարարության սույն տեքստը հաստատված է գնահատող հանձնաժողովի
2024 թվականի մարտի 06-ի թիվ 3 որոշմամբ և հրապարակվում է
«Գնումների մասին» ՀՀ օրենքի 29-րդ հոդվածի համաձայն

Ընթացակարգի ծածկագիրը՝ «**ՍՄ-ՄՀ-ԲՄԱՇՁԲ-24/02**»:

Պատվիրատուն՝ ՀՀ Սյունիքի մարզի Մեղրիի համայնքապետարանը, որը գտնվում է Մեղրի քաղաքի Զորավար Անդրանիկի 2 հասցեում, ստորև ներկայացնում է իր կարիքների համար շինարարական աշխատանքների ձեռքբերման նպատակով կազմակերպված «**ՍՄ-ՄՀ-ԲՄԱՇՁԲ-24/02**» ծածկագրով գնման ընթացակարգի հրավերի վերաբերյալ 2024 թվականի մարտի 04–ին ստացված հարցադրումը և դրա վերաբերյալ 2024 թվականի մարտի 06-ին տրամադրված պարզաբանումը՝

Հարցադրում N 1՝ Հարցադրման ստացման ամսաթիվ 04.03.2024թ.

Հարգելի հանձնաժողով ըստ մասնակցի՝ ի պատասխան Ձեր պարզաբանման տեղեկացնում եմ, որ Պատվիրատուն ոչ միայն չի հիմնավորում խմբավորման անհրաժեշտությունը, այլև խախտում է ՀՀ Գնումների մասին օրենքի 3-րդ, 25-րդ կետերի դրույթները:

Նախ տեղեկացնեմ, որը տարբեր կազմակերպությունների կողմից կատարվող աշխատանքները ոչ մի կերպ չեն կարող միմյանց խոչընդոտել, քանի որ դրանք բնույթով միմյանցից տարբեր են, բացի այդ վերելակը քանի որ համարվում է բարձր վտանգավորության օբյեկտ, այն շահագործվում է միայն պետական լիզորված մարմնի կողմից փորձագիտական եզրակացություն ստանալուց հետո, իսկ տանիքների վերանորոգման աշխատանքները ընդունվում են տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպության կողմից:

Կատարողական ակտերի ընդունման և ներկայացման բնույթն անգամ միմյանցից խիստ տարբեր են:

Ավելին տարբեր են անգամ երեշխիքային պարտավորությունները, վերելակի համար այն կոնստրուկտիվ է, իսկ տանիքների համար զուտ շինարարական:

Այնպես որ Ձեր կողմից նշված փուլային աշխատանքներից խուսափումը դա հիմք չէ տարբեր բնույթի աշխատանքները մեկ չափաբաժնում խմբավորելու համար: Եվս մեկ անագամ խնդրում եմ մրցույթը տարանջատել չափաբաժինների:

Պարզաբանում N 1՝ Պարզաբանման ամսաթիվ 06.03.2024թ.

Տեղեկացնում ենք Ձեզ, որ Պատվիրատուի կողմից նախորդ պարզաբանման մեջ հստակ նշվել է չափաբաժինների միավորման պատճառը, որը չի հանդիսանում օրենսդրության պահանջների խախտում:

ՀՀ գնումների մասին օրենքի 3–րդ հոդվածի համաձայն գնման գործընթացի նպատակն է գնումների և գնումների գործընթացի տնտեսող, արդյունավետ և օգտավետ իրականացում,որով և առաջնորդվել է պատվիրատուն աշխատանքների ձեռքբերման ժամանակ:

Գնման գործընթացի սկզբունքների՝ մրցակցության, մասնակիցների շրջանակի ընդլայնման և նրանց միջև մրցակցության խրախուսման պահպանման կետերի խախտում կարող է արձանագրվել միայն մրցույթը կայանալուց հետո:

Պատվիրատուի կողմից նախատեսվող աշխատանքները կատարվելու են նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման վրա,որը հաստատվել է՝ Կառավարության միջգերատեսչական հանձնաժողովի 2023 թվականի դեկտեմբերի 28-ի նիստի ժամանակ:

Նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսված աշխատանքների ընդունումը կատրվելու է օրենսդրության պահանջների համապատասխան: Տանիքների վերանորոգման աշխատանքները և վերելակների տեղադրումը կընդունվեն տեխնիկական հսկողության իրականացնող կազմակերպության կողմից, այնուհետև վերելակների շահագործման համար պատվիրատուն պետական լիզորված մարմնին կպատվիրի փորձագիտական եզրակացություն վերելակների հետագա շահագործման համար:

Կատարողական ակտերի ընդունումը կիրականացվի ըստ կապալառուի կողմից ներկայացված կատարված աշխատանքների:

Ընտրված մասնակիցը պարտավոր է իր երաշխիքային պարտավորությունները կատարել թե վերելակի և զուտ շինարարական աշխատանքների համար առանձնացված ժամանակահատվածներով: Իսկ եթե պայմանագիրն իրականացվում է համատեղ գործունեության (կոնսորցիումի) պայմանագիր կնքելու միջոցով, ապա այդ պայմանագրի մասնակիցները կրում են համատեղ և համապարտ պատասխանատվություն երաշխիքային պարտականությունների համար:

Մրցույթը հնարավոր չէ տարանջատել չափաբաժինների քանի որ սույն գնման գործընթացը կազմակերպվում է ՀՀ կառավարության կողմից իրականացվող սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում և ֆինանսավորումն իրականացվում է համայնքային ու պետական բյուջեներից՝ համապատասխանաբար 40 տոկոս և 60 տոկոս մասնաբաժիններով և «Մեղրի համայնքի Մեղրի քաղաքի Փարամազի փողոցի 15, 17, 19, 32, 36, 42, Ադելյան փողոցի 15ա, 15բ բազմաբնակարան շենքերի տանիքների վերանորոգում և վերելակների արդիականացում» վերնագրով սուբվենցիոն ծրագրի հայտը հաստատված է կառավարության կողմից մեկ չափաբաժնով:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել «ՍՄ-ՄՀ-ԲՄԱՇՁԲ-24/02» ծածկագրով գնահատող հանձնաժողովի քարտուղար Շ. Սարգսյանին:

Հեռախոս՝ 37428643500
Էլեկոտրանային փոստ՝ «shushansargsyanh@mail.ru»

«ՍՄ-ՄՀ-ԲՄԱՇՁԲ-24/02» ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողով